ՍՈԽԱԿԻ ՎԻՇՏԸ

Մի օր տեսավ օտար թըռչուն՝
Սոխակ կուլար կուց-կուց արյուն,
– Ինչո՞ւ, ասավ, սոխակ՛ սիրուն,
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արյուն.
5 Ինչո՞ւ, մինչ ճրբ դու երերուն
Տըխուր կուլաս չոր թըփերուն,
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Էդ ճըռվռան քո երգերուն,
Հապա ինչո՞ւ դու օրն ի բուն,
10 Էս լուս ու մութ առավոտուն,
Էս շատ անուշ զով հովերուն
Ախ ու վախով կուլաս արյուն։
– Ինչ կըխոսես, օտար թըռչուն,
Խենթ ու խելառ դու ցընորուն.
15 Ջմե՛ռ նըստեց մեր սարերուն,
Կըտրեց ջըրիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,
Ինչպես չըլամ կուց-կուց արյուն։
20 Էլի ասավ օտար թըռչուն.
– Հերիք դու լաս, սոխա՛կ սիրուն,
Հերիք դու լաս կուց-կուց արյուն,
Էլի կուգա քեզ նոր գարուն,
Արև ծագե էս վայրերուն,
25 Հալին ձյուներ մեր սարերուն,
Բացվին ջըրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն
Բարև կուտաս ծաղիկներուն։